

ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ՄԵԶԱՍՈՒՄ

ՅԱԿՈԲ ԱՆԱԳՐԵԱՆԻ

I

Անդրկովկասի պէս մի երկիր, որ բնութիւնից օժտւած է ամեն-
տեսակ բնական հարստութիւններով ու յարմարութիւններով, և
որի բնակիչների մեծ մասը համեմատաբար շատ էլ յետ մնացած
չէ ժամանակակից քաղաքակրթութիւնից,—այդպիսի մի երկիր
ինչու չը պիտի կարողանար մատակարարել իր ազգաբնակութեան-
կենսական պիտոյքը, ծածկել նրա մերկութիւնը, նոյն իսկ պճա-
զարդել նրան իր արտագրած բամբակից, բրդից, մետաքսից սեփա-
կան գործարաններում՝ պատրաստած հաղուստներով. փոխանակ
այդ բերքերը հում կամ կիսամշակ արտահանելու և դրեթէ կիսա-
գնի վաճառելու, նոյնը կարելի էր ասել և արիշ շատ գործարանա-
կան արդիւնքների մասին, որ մենք ստանում ենք դրսից:

Այդպիսի՝ բնութեամբ հարուստ մի երկրի լնակիչները մեծ
մասամբ ինչու պիտի ձգուեին դէպի մանրավաճառութիւնը և դէպի
վաճառականութեան այն՝ թէ երկրի և թէ իրանց համար՝ շատ
անգամ անօգուտ ճիւղը, որի ամբողջ էութիւնը կայանում է օտար
գործարանական արդիւնքները մեր երկիրը ներմուծելում և սո-
զացնելում:

Ահա հարցեր, որոնք ծագում են աեզական շահերի վերաց
մասածողի գլխում, և որոնց ուստմնասիրութիւնը կը լինի յօդւածիւ-
նապատակը:

II

Թէ Անդրկովկասը արտադրում է բաւական մեծ քանակութեամբ ընտիր և սոոր տեսակների բամբակ ու մետաքս,—այդ ապացոյցի կարօս չէ։ Թէ Անդրկովկասը իր տեղադրութեան, դաշտավայրերի և լեռնալանջերի շնորհիւ, կարող է սնուցանել աւելի ևս ազնիւ ցեղերի ոչխարներ, որով և մասուակարարել աւելի ընտիր տեսակների բուրդ, քան թէ մեր ունեցածը, —դա նոյնպէս ապացոյցի կարօս չէ։ մնում է ուրեմն այդ հօւմ բերքերի մշակման համար բանալ գործարաններ՝ մանելու, գործելու, ներկելու, տպելու և այլն, —և ահա մենք կունենանք մեր սեփական կտաւը, շիթը, սարպինկան, մահուղը, ֆլանէլը, շալը, բուրսօն, Փայը, թաւիշը, և այլն, և այլն։

Այդ յեղաշրջման տեղի ունենալով՝ մեր վաճառականների դերեն էլ ինքնին կը փոխեն, —նրանք ոչ այնքան էժան արտահանելու հում բերքեր կը գտնեն մեր երկրում և ոչ էլ օտար գործարանական արդիւնքների ներմուծելու այս աստիճանի կարիք։ ուստի նրանք իրանց բոլոր ոժժերով կը նւիրեն մայրենի գործարանական արդիւնաբերութիւնը ծաղկեցնելուն և վերջինների արդիւնքները երկրի մէջ տարածելուն։

Որպէս զի ինդիրը ոչ մասնագէտների համար լուսաբանւած լինի և ներքեւում մեր դուրս բերելիք եզրակացութիւններն ուղիղ և փաստերի վերայ հիմնւած լինեն, —մենք մէջ կը բերենք այսուեղ մեր գործարանական արդիւնաբերութեան և վաճառականութեան համառօտ տեսութիւնը։

III

Գործարանական արդիւնաբերութեան նախատիպը՝ տնայնագործութիւնը՝ ի վաղուց անտի, ինչպէս ամեն տեղ նոյնպէս և մեզանում, գոյութիւն ունէր։ Մի 40 տարի առաջ, երբ ուստի և տեղական գործարանականութիւնը դեռ ծաղկած չէր, ամեն ինչ մեր մէջ տնայնագործութեան արդիւնք էր։ Բամբակը, բուրդը, մետաքսը մաքրուում, մանւում, ներկուում և գործուում էին տանը, —ուսն չը կար, որ մի որ և է մանելու կամ գործելու գործիք չտնենար։

Տեղական բոլոր բոժժումը թել էր քաշւում տանը. օճառը, ճարպի և մեղրամոմի մոմերը, օղին պատրաստ ում էին տանը և այն, և այն: Բայց հետզհետէ՝ մի կողմից գործարանական արդիւնքների երեւան գալովը—որոնք աւելի զեղեցիկ էին և էժան, թէև ոչ միշտ յատկութեամբ հաւասար կամ գերազանց—և միւս կողմից մանրավաճաների և վաճառականների երեւան գալովը—որոնք անպատճութիւն համարեցին այլեւս թողնել՝ որ իրանց ծնողները, կանաչը, քոյլերը շարունակէին այդպիսի իրր սասոր զործով զբաղւել—անայնագործութիւնը ընկաւ:

Ներկայում՝ եթէ անայնագործութեան շարքում : Եթէ զնենք մի քանի արդիւնքներ—ոսկերիչների, պղնձագործների, դարրինների և բրուտների ձեռքերից ելած—որոնք խփապէս աւելի արհետաւորի գործ են, քան թէ անայնագործի մենք կունենանք հետեւեալ արդիւնքները: Բամբակեղէն՝ կտաւ, չարսաւ, գալաշահի, ալաջայ, և այն. բրդեղէն՝ գորդ, կարպետ, ջւալ, խուրչին, մափրաշ, շալ (տեղական մահուղ), գուլպայ, ձեռնոց, թաղիք, թաղիքէ ղլխարկ, պարան, և այն. մետաքսեղէն՝ զանավուզ, թափտայ, թաշկինակեներ, ժապաւէններ, երիզներ, և այն. փայտեղէն՝ ամաններ, թարազներ, և այն. խսիր. հանովի սփռոցներ, ճակատանոցներ, չիքիլաններ և այն: Եթէ որանց վիրայ աւելացնենք շերամապահութիւնը, տեղական պանրագործութիւնը և տնային օճառագործութիւնը—կարծեմք բոլորը մի առ մի մէջ բերած կը լինենք:

Ընթերցողը կը նկատէ մեզ անշուշտ, որ մի երկրի անայնագործութիւնը եթէ այդքան բազմասեսակ արդիւնքներ է արտադրում, ինչու ընկած պէտք է համարւի: Բայց բանը նրանումն է, որ այդ արդիւնքներից մի քանիսի միայն հետքերն են մնում, մի քանիսն էլ սպահանւում են միմիայն թուրք ազգաբնակութեան ձեռքով և գրեթէ միայն նրանց կիրաւութեան համար. այնպէս որ ընդհանրապէս առնելով տնայնագործութիւնը մեզանում կորցրել է այն բնաւորութիւնը, որը ունի նա օրինակ նուսաստանում: Մեր ազգաբնակութիւնը նրան նւիրելով օրւայ մէջ մի քանի ազատ ժամեր՝ նպատակ ունի կայ ժամանակ անցկացնել, կամ իր ձեռքի շնորհքը ցոյց տալ, կամ տան պիտոյքի մի պակաւ առարկան լրացնել և կայ ամենաշատը տնային ծախքերի տարեկան բացը ծածկել:

IV

Անդրկովկասեան վաճառականների՝ Եւրոպայի և ռուս գործարանատէրերի հետ շփւելը, ուսանող երիտասարդութիւնից ոմանց տեխնիկական դպրոցներում աւարտելը և Եւրոպացիներից ոմանց մեր երկրում հաստատելը — ապարդիւն չանցան մեր երկրի համար Բացեցցին հետզհետէ մի 40 տարւայ ընթացքում, մեքանիկակական գործարաններ (Թիֆլիսում և Բագրում), շոգէաղացներ (Թիֆլ. և Բագ.), մետաքսի մանարաններ (Ագուլիսում, Օրդուբաթում, Նուշիում, Նուկսիում և Զաքաթալում), կէրոսինի, հանքային իւղերի և նաւթավին արդիւնազործութեան օժանդակ գործարաններ (Բագրում և Բաթումում), կառքի գործարաններ (Թիֆլ.), բնաճարապէ մոմի և օճառի գործարան (Թիֆլ.), բամբակի մանարան և կտաւի գործարան (Թիֆլ.), ձիթահանութեան գործարաններ (Թիֆլ. և Էջմիածին), ապակի գործարան (Թիֆլ. նահանգում), ծխախոսի, գարեջրի, օղիի, արւեստական հանքային ջրերի գործարաններ (զանազան տեղերում) և այլն¹⁾:

Բայց այն ֆազիսները, որոնց միջով անցան և որոնց մէջ ներկայում էլ գտնվում են այս գործարաններից մի քանին, առիթ են

1) Ակտոնդ աւելորդ չնչք համարում վիշտակել և այն չաջողւած գործարանները, որոնք իշխ. Վորոնցովի և նրա լոջորդների օրերով պիտական ահագին նպաստներով ու արտօնութիւններով հիմնած լինելով հանդերձ շատ կարճատես կեանք ունեցան: Դրանք էին՝ Կոստէլիի մետաքսի մանարանը Թիֆլիսում 1827, Լսաշի ապակի գործարանը Բորժոմում 1828, Զուբալովի, Թամամշեւի և Տէր-Ղուկասովի ընկերութեամբ բացած շաքարի գործարանը Թիֆլիսում 1837, իշխ. Երիտասովի ապակի գործարանը իր կալւածքում 1841, Շուլցի և նրան լաջորդող Դէզում եղբայրների բնաճարապի և օճառի գործարանները Թիֆլիսում 1843, Անգրէնակու մահուղի գործարանը Թիֆլիսի գաւառում 1840 ական թւերի վերջերում, Շտիւասէի մեքանիկական գործարանը Թիֆլիսում 1851, Շմիդտի շոգէաղացը Թիֆլիսում 1856, Լիթի և նրան լաջորդող թերնուցիի և Վիստէի մեքանիկական գործարանը Թիֆլիսի գաւառում 1860, բարոն Բախի օղիի գործարանը Բորժոմում 1876: (Օնօրք ֆաբ. և զանդ. Թիֆլ. Գյուղավաներովա, 1888).

Ման. Խմբ. Բարոն Բախի գործարանը Մեծ. իշխ. Միխակիլ Նիկոլաևիչինն է, և նորից սկսել է բանել 1891 թւականից սկսած:

տալիս մեզ ենթադրելու, որ դրանցից շատերը հաստատուն հիմքի վկրայ դրւած չեն, այլ կան կէտեր՝ որոնց վերայ ուշ դարձնելը անհրաժեշտ է: Մենք մասնացոյց կանենք նրանցից միայն մի քանիսի վերայ: Մեքանիկական գործարաններից մէկին պատւիրում էք մի գործ, որոշում՝ էք պայմանաժամ նոտարի ձեռքով, նշանակում էք մինչև անդամ տուղանք, բայց՝ այդ իրան առաջնակարգ համարող գործարանը՝ ոչ թէ միայն ժամանակին ձեզ չէ յանձնում ձեր պատւիրած գործը, այլ երբեմն նոյն խոկ չէ կարողանում պէտք եղածին պէս շինել նրան: Ուրիշ օրինակ, մետաքսի մանարաններից ոչ մէկը մինչև այսօր չը կարողացաւ հաստատել — չենք ասում բարձրացնել — իր դիրքը. մի քանին ընկան, միւսներն էլ հազիւ հազ—ինչպէս կասեն—ծայրը ծայրի են կպցնում տարեգլիմին: Եւ այս զարմանալի չէ նրանց համար, որոնք ականատես են եղել թէ ինչպէս այդ գործարանատէրերը անհաշիւ կերպով միմեանց դէմ մրցելով՝ տեղումը ձեռք էին բերում բոժոժը և ինչպէս Առսկւայում թելլ վաճառելու համար նոյնպէս մրցելով դանէ դուռն ընկնում, երբեմն մինչև անդամ ուրիշ ապրանքի հետ փոխանակելու առիւտելով: Մի երրորդ օրինակ էլ՝ և բաւական է. Միրզոյեւի կատւի գործարանը մի 20 տարւայ ընթացքում՝ 3-րդ թէ 4-րդ տիրոջ ձեռքին է զանուում:

V

Անցնենք վաճառականութեան՝ Պարսից խաների ժամանակ անընդհատ կրկնեազ ասովատակութիւնները, հարստահարութիւններն և պատերազմները: Հայերի վաճառականութիւնը հոգեվարը դրութեան էին հասցրել: Ուռւաց մեր երկիրը ախրապետելուն և հայերի կեանքն ու զոյքը փոքր իշատէ ասպահովելուն հետ գրեթէ միաժամանակ սկսում է և Անդրկովկասեան հայերի վաճառականութեան ներկայ պէրիոդը:

Մենք չենք ընդպարձակւիլ վաճառականութեան այլ և այլ ձիւգերի առանձին առանձին տեսութիւնների վերայ, այլ կը բաւականանք խօսելով նախ ձոթեղէն — կամ ինչպէս այժմ անւանում են «մանուկակառաջին» — ապրանքի փոքրաքանակ և մեծաքանակ առևտուրների մասին, իբրև ամենատարածւած և, հայերի նախկին

մասամբ և այժմեան հասկացողութեամբ՝ միակ սովորքեարի առ-
բանքին և ապա կանցնենք Վշտի ապրանքին մեծաքանակ առեառութ-
բնդհանուր աեսութեանը:

Ճոթեղէնի փոքրաբանակ առևտուրը՝ արևելեան ձեւականութեան այդ նախակրթանքը՝ առաջին և գրեթէ միակն էր, որ գրաւեց հէնց սկզբից դէպի ինքն այն ամեն հային, որ սովորաբեարչ դառնալու փափագ ունէր: Գուցէ պատճառը այն էր, որ թուրք ազգաբնակութիւնը արդէն իր ձեռքում ունէր բոլոր ուտելեղէնների առևտուրը կրօնական յայտնի պատճառով: Բայց որովհետեւ այդ ժամանակներում առետրականների համար ամեն տեղ զբաղմունքը շատ սահմանափակ էր,—ուստի տեղական պահանջը լրացնելուց յետոյ՝ ննացին զեռ ևս իրանց ծննդավայրում գործ չը գտնող շատ սովորաբեարացւներ, մանաւանդ բերդաքաղաք Նուշիում, սակաւահող Ագուլիս և Դաշտ աւաններում (այժմեան Վերին և Ներքին Ազուլիսներ) և աղքատիկ Գանձակ քաղաքում, որոնք և ցրեցան ու բուն դրին զանազան հեռաւոր քաղաքներում, աւաններում և գիւղերում (Նուխի, Զաքաթալա, Կախ, Գէնիսիկ և այլն): Անուհետեւ քաղաքական և գիւղական ազգաբնակութիւնից ահազին քանակութիւն՝ իրանց շրջանաւմ փայլող մի մի առևտրական անհատների արտաքինից շլացած՝ ոչ թէ միայն իրանք ամեն զբաղմունք և արհետ թողին ու վագեցին յայտնի վաճառաւեղերը, ոչ և իրանց որդիներին բերելով և աշակերտութեան տալով այդ աեղերում՝ հեազնեաէ աւելի և աւելի սուարացրին փոքրաբանակ՝ ճաթավաճառների թիւը, մինչև որ 60-ական թւերի վերջերում աեղի ունեցող կրեղիսը՝ հետեւանք Ամերիկայի Միացեալ-նահանգների հաշուութեան՝ եկաւ վերջ տալու այդ հսունքին: Այսուամենայնիւ փոքրաբանակ-ճաթավաճառների թիւը ննաց և շարունակում է մնայ շատ աւելի, քան թէ իրաք կարիք կալ:

Մեծաքանակ-ճռիթավաճառները երկար ժամանակ, մինչև 60. ական թվերը շատ փօքրաթիւ էին, նրանք բերում էին ճռիթելէն սկզբումը միայն Թաւրիզից (տեղական գործւածքներ և ներկածքքներ - խամրալաթ - և անգլիական կուռաներ, չիթեր և ալին). յետոյ ուշ դարձրին և ուռւաց մանուկակրտային ապրանքների վերաց ու հետագիտէն մի կողմից նրանց բերին տարածեցին տեղա-

կան ազգաբնակութեան մէջ և միւս կողմից անգլիական նմուշները Մոսկացի գործարանատէրերին տանելով՝ օդնեցին նրանց կատարելագործել և հարստացնել իրանց մանուֆակտուրան։ Պէտք է խսուտովանել, որ հայերը ձրի չէին կատարում այս ձառայութիւնը։ Այդ ժամանակները ապրանքի առքի և վաճառման գների ապրերութիւնը—առանց ճանապարհածախօքը հանելու—հասնում էր մինչև $40^{\circ}/_0$ ։

Առհասարակ վաճառականների համար երանելի ժամանակներ էին այդ թւականները։ Մնանկութիւն ասած բանը յացանի չէր, — ինչպէս գործարանատէրերն էին իրանց ապրանքը վարկով հաւատում մեծաքանակ վաճառականներին, նոյնպէս վերջիններս էին հաւատում գորքաքանակ վաճառականներին, սրանք ևս իրանց հերթում վարկով տալիս էին գիւղացիներին, — և ամեն մէկը ժամանակին վճարում էր իր պարտքը. առաջինները՝ դրամով, իսկ վերջինները՝ գիւղատնտեսական բերքերով։

Այս միջոցում (1863) տեղի ունեցաւ մի երեսովիթ, որ լիշատակութեան արժանի է։ Նուխւայ փոքրաքանակ ճոթավաճառները—մեծ մասամբ ագուլեցիներ—մի ազուլեցու առաջնորդութեամբ—եթէ կարելի է այսպէս ասել—ապստաբրւեցին մեծաքանակ ճոթավաճառների մենավաճառութեան դէմ, և ահա 40 հոգուց կաղմած մի լնկերութիւն իր գործակատարներին ուղարկեց ամեն կողմ։ Մոսկա, Կ. Պոլիս, Թիֆլիս, Թաւրիզ, Քաշան և ուրիշ երկրորդական քաղաքներ ու ամեն տեղից առաջին ձեռքից ստանալով իրան հարկաւոր ապրանքները՝ սկսաւ բաժանել լնթացիկ զնով ընկերների վերաց, — տոկայն առանց մրցել կամենալու միւս մեծաքանակ ճոթավաճառների հետ—և ունեցաւ առաջին տարիները փալլուն աջազութիւն—տարեկան զուտ շահ $40-50-60^{\circ}/_0$ ։

1865 թ. մի գագաթնակէտ էր առհասարակ վաճառականութեան համար։ Ամերիկացի Միացեալ-Նահանգների հաշտութիւնը մի սարապին հարւած տւեց վաճառականութեան գրեթէ բոլոր ճիշդերին։ Մանուֆակտուրային ապրանքի գինը մեզանում միանգամից կոտրեց մինչև $50^{\circ}/_0$ ։ Այդ բաւական չէր, — դրան հետեղ շերամի հիւանդութեամբ գիւղացիները, զրկւելով գիւղատնտեսութեան այդ զլսաւոր, և տեղ տեղ միակ, բերքից՝ ըստ կարողացան վճարել արգէն

իրանց սաստիկ ծանրացած պարտքերը փոքրաքանակ ճոթավաճառ-ներին. հետեւաբար և վերջիններս անկարող եղան իրանց պարտքը վճարել մեծաքանակ-ճոթավաճառներին (բայց ի պատիւ վերջիննե-րիս փակագծում ասենք, որ սրանք իրանց պարտքը օտար գործարա-նատէրերին և վաճառականներին՝ լիովին վճարեցին): Այս մի անուղ-ղելի հարւած, մի գահավիճումն էր, որի հետքերը մինչև այսօր չեն ջնջւել: Սղբատացած վաճառականներից շատ քիչերը միայն կարողացան նորից փոքր առ փոքր ոտքի կանգնել, որոնք և շարու-նակում են մինչև այսօր իրանց գոյութիւնը:

Թէև յիշեալ կրիզիսից յետոյ մեծաքանակ-ճոթավաճառների թիւը շատ պակասեց—զերծ մնացածներից շատերը իսպառ թողին ճոթավաճառութիւնը և ձեռնարկեցին կշռի ապրանքներով առև-տուսի (տորոն, բամբակ, տրանզիտ շաքար, բուրդ, մետաքս, բոժոժ, չիրիզոն և այլն). Թէև և այնուհետեւ երևան եկան Լոձի դործարանա-կան արդիւնքները, որոնք սուսականներից աւելի ձեռնոու էին, — այսու ամենաշնիւ, եթէ ի բաց առնենք պատերազմական տարի-ները, մանուվակուրազի առաջւան շահերը շատ կարճատե եղան ձանապարհների հաղորդակցութեան դիւրանալով նախ ամեն մի փոք-րաքանակ-ճոթավաճառ, որ մի քանի հազար ոռուրլի ունէր, սկսա-ինքն անձամբ յաճախել Մոսկա, Նիժնու տօնավաճառը, Լոձ, Կ. Պոլիս, Մանչեստեր, Թաւրիզ և այլն. կամ յանձնակատարի մի-ջոցով ձեռք բերել ապրանքը ուղղակի դործարանատէրերից և ապա՝ վերջիններս, փոխանակ իրանց ասղրանքը երկարժամանակեայ վար-կով մեծաքանակ-վաճառականներին հաւատալու, որը իրանց համար առանց կորստի չէր, աւելի ձեռնոու. համարեցին ուղղակի յարա-բերութեան մէջ մոնել փոքրաքանակ-վաճառականների և սպառող-ների հետ, ու սկսան սեփական պահեատներ բանալ իրանց ար-դիւնքների համար գլխաւոր քաղաքներում: Այդպիսի պահեստներ ունին արդէն Ժիրարդովսկայա մանուվակուրա, Կոստրոմ-Նարո-սլավսկայա մանուվակուրա, Նեւսկայա մանուվակուրա, Բենդեր և Ստելլանով, Դիտեատրովսկի և լնկերութիւն և այլն Թիֆլիսում, և Մորոզով, Կոնշին, Պրոխորով, Զուրկով և այլն Բագւում Երևա-շատ չի անցնիլ՝ ուրիշ քաղաքներում ևս կը բացւեն այդպիսի

պահեստներ՝ 1): Բացի դրանից շատ գործարանատէրեր իրանց գործակալները նմուշները ձեռքներին ուղարկելով զանազան քաղաքներ՝ թէ հեռաւոր տեղիր յաճախելու ծախքից ազատեցին գնողներին և թէ վճարութների մասին նրանց դիւրութիւններ տւին, ինչպէս և ապրանքի արժէքի փոխադրութիւնը ստացողի վերայ վաճառքի ուղարկութիւնը:

Այս ամենի վերայ աւելացնենք և այն, որ ոռւս մանուֆակտուրային գործարանները, շնորհիւ զանազան նպաստաւոր հանգամանքների, որպիսի են բանկային հաստատութիւնները, այնքան բազմազատկել են իրանց արտադրութիւնները, որ նրանց սաղացնելու համար պատրաստ են վարկ բանալու գրեթէ ամեն պատահողին՝ որպիսի և լինէր նրա վարկի ընդունակութիւնը։ Այսպիսով առաջ է բերում մի վաճառականական տարր, որ առանց սեփական վնասի՝ մրցող է հանդիսանում դրամատէր վաճառականի հետ։

Ներկայ հանգամանքների մէջ գործող մեծաքանակ-ճոթավաճառներին նորմ է կամ յաճախակի սնանկութեամբ իրանց գէֆիցիութ ծածկել, կամ աւելի պատուածանաշներին, շիտակներին՝ ձգտել նոր շուկաներ գտնելու իրանց գործառնութիւնների համար, օրինակ Անդրկասպեան երկիրը և այլն։

Այժմ մանուֆակտուրային ապրանքի առքի և վաճառման գների տարրերութիւնը առանց ճանապարհածախքը հանելու—իշել է $10 - 15\%$ և այդ չնչին շահի հետ կապւած են բազմաթիւ ծախքեր, տուրքեր և մեծամեծ ռիսկներ վարկով վաճառումների կողմից։

1) Այս տողերը արդէն դրւած էին, որ Խօսե Վրեմլ լրագիրը մեզ լուր բերաւ, թէ չուտափ ներկալացնելու է մինխատրութեան հաստատութեանը մի կանոնադրութիւնն գործակալների և շրջիկ-գործակատարների ընկերութեան, որը նպատակ ունի դիւրացնել մասնը գործարանատէրերի լարաբերութիւնը հեռաւոր վաճառականների հետ՝ կարգելով գործակալների նույսաստանի քաղաքներում և արտասահմանում, իսկ սէզոնալին վաճառումների համար՝ ցրւելով շրջիկ գործակատարներ ամբողջ Ռուսաստանի վաճառական և պահեստի գրամագլուխներով։

VI

Անցնելով կշռի ապրանքով առևտուրին՝ պիտի ասենք,
որ արտասահմանի հետ գործ բռնողները, թէև մի քանի
տարիներում—օրինակ Ֆրանսիայի շերամի հիւանդութեան ժամա-
նակ—մեր բոժոժի, մետաքսի թելի և մնացորդների (déchet) հա-
մար լաւ գներ ստացան, բայց 60-ական թւերի անաջող շահադի-
տութիւնը¹⁾ շատ թանգ նստեց նրանց։ Եւ ընդհանրապէս առ-
նելով՝ մեր վաճառականներից հազիւ թէ ով և իցէ արտասահմա-
նից մի առանձին դրամագլխով վերադարձաւ. այն ինչ՝ կործանւող
աները աչքի առջև են։ Եւ այս զարմանալի չէ. կոյր բաղդի վե-
րայ իր յօյսը դրած արևելցին ինչ կարող էր շահել դիտութեան
և փորձի վերաց հիմնող եւրօպացուց։ Ճշգրւթիւնից զուրկ արե-
ւեցու ձեւքով առանց տեսակաւորութեան (рассортiroвка) կապւած
ապրանքի հակերը՝ եւրոպական փորձի, տեսակաւորութեան, — եթէ
կարելի է այսպէս ասել — ինչւիզիցիացի ենթարկելուց յետոց՝ ինչ
շահ կարող էին տալ մեր վաճառականին։ «Չէ, շահ չը կաջ,
դժւար է Մարտէլլից դլուխ դուրս բերել» ասաց հայը ու յետ
դարձաւ։ Մի աչքի ընկնող տարբերութիւն ևս արևմտեան վա-
ճառականների մէջ՝ արևելցիների դանդաղկոտութիւնն և եւրո-
պացիների արագաշարժութիւնն է։ Մեր դրամագլուխը տա-
րին մի շրջան միայն առնէ։ Հոգ չէ, միայն թէ 20% վաստակենք,
իսկ եւրոպացուն բաւական է ամեն անգամ և 5%, միայն թէ
տարւայ ընթացքում 8—10 շրջան կատարէ նրա դրամագլուխը։

¹⁾ Ակս շահադիտութիւնը կալանում էր նրանում, որ ալդ ժամանակի, Ամերիկայի Միացեալ Նահանգների պատերազմի պատճառով հաղորդակ-
ցութիւնների կարելով, երբ Մարտէլլում մետաքսի թելի, բոյոժի, Փրի-
դոնի և ալլն գներն սկսան բարձրանալ, աճտելի, հայ վաճառականները
ոչ միայն իրանցը չը վաճառեցին, ալլ և շուկափի բոլոր ապրանքը իրանց
ձեռքը հաւաքելով՝ նպաստեցին գների աւելի և աւելի բարձրանալուն։
Իսկ շետու երբ պատերազմի վերջանալով՝ ստացւող նոր ապրանքները
իջեցնում էին հրապարակի գները, մերոնք. իդուր փորձեցին մի քանի
զեռմերով պահպանել բարձր գները, որոնք միանգամից սաստիկ ընկան՝
միծ վեամներ պատճառելով՝ հայ վաճառականներին։ Ակսափի մի հազւա-
գէպ առիթից օգտող միմիայն տեղական միջնորդներն եղան՝ միենովն
ապրանքը մի քանի անգամ վաճառելով։

Ներկայումս բոժոժի, մետաքսի թելի և նրա ֆնացորդների արտահանութիւնը գրեթէ բոլորովին գաղարած է. բրդի առևտուրը ըստ մեծի մասին անցել է կամ անցնելու վերայ է օտարի ձեռքը Բրդի արտահան-առևտուրը 1890 թւականից սկսած գրեթէ ամբողջապէս կենարոնացել է Մոսկվայի Ստուկէն և ընկ. Փիրմացի Թիֆլիսեան ճիւղում: Տեղացիների ձեռքով արտահանումը են, համեմատաբար աննշան քանակութեամբ, բացի բրդից՝ կէրոսին, հանքացին իւղեր, գորգ, եղիսաբեցորեն, մորթի, փրիզոն (ասկաւ), երբեմն նաև ցորեն, գինի, բամբակ:

Կշռի ապրանքի առևտուրը Ուռւսաստանի հետ աւելի մխիթարական չէ կարելի համարել: Իրաւ է, մի ժամանակ, քանի որ Ուռւսաստանում մետաքսագործութիւնը գեռ ևս նահապետական դրութեան մէջ էր, մեր մետաքսի թելերը միակ հում նիւթն էին այնտեղ պատրաստող կերպասների. բայց յետոյ՝ շերամի հիւանդութեան մեղանում սկսւելուն և հետեւաբար մետաքսի թելերի գները Մոսկվայում խիստ բարձրանալուն հետ, երեան եկան, մինչև այդ ժամանակ մեզ անյացա, մետաքս արտադրող երկիրներ՝ Բուխարա, Դաշքէնդ, Առկանդ, Ֆալոն և Զինաստան, որոնց մատակարարած թելերը իրանց յատկութեամբ և գներով այնուհետև տիրող հանդիսացան Մոսկվայի հրապարակի վերայ և այնտեղից յետ մզեցին մեր թելերին: Այդ հանգամանքը թէև առիթ տւեց մեր մանարաններին թէ կատարելագործելու իրանց թելերը և թէ նրանցից բուտոկ պատրաստելու, բայց վերջիններս էլ, չը նայելով նրանց կատարելադործութեան վերայ զրւած բոլոր չանքերին, չեն կարողանում փրանսիական բուտոկից մրցման դիմանալ:

Բամբակը, իբրև վաճառականական ապրանք, սկսեց յայտնուել Մոսկվայի և արտասահմանի շուկաներում միայն 1862 թ., երբ Ամերիկայի Միացեալ-Նահանգների պատերազմը փակեց ամերիկական բամբակի ճանապարհ: Այդ օրից թէև ուղիղ 30 տարի է անցել, բայց դեռ ևս մեր կողմից ոչինչ չէ արւած այդ ապրանքի առևտուրը խելացի հիմքի վերայ դնելու՝ և մինչև այժմ, եթէ երբ և իցէ դրանից շահող եղել է,—այդ պէտք է վերադրել միայն բացառիկ դէպքերի (պատերազմ, մաքսի յաելումն): Այդ բաւական չէ, ի նախատինս մեր վաճառականների պէտք է խոստովանենք,

որ մեր անհեռատես վարժունքով, մեր խարդախած ապրանքով մենք բացի չը շահւելուց՝ չը կարողացանք, գոնէ մեր ձեռքին պահել այդ պատուական առևտուրը։ Փոխանակ մեր ապրանքը ըստ ամերիկականին տեսակառելու¹⁾ և ամեն մէկ տեսակը իր գնով վաճառելու—մեր յոյսը զրեցինք խարելու, լաւի տեղ վատն անցկացնելու վերայ և վերջապէս բանը անտեղ հասցրինք, որ ոռւս և լեհացի գործարանատէրերն իրանք եկան հաստատեցան մեր երկրում և մեր միջնորդութիւնը այլ ևս աւելորդ դարձրին։ Այնպէս որ ներկայումն մեր վաճառականների՝ այդ ապրանքի արտահանութեան մէջ ունեցած մասնակցութիւնը շատ չնշին է և գուցէ ժամանակով բոլորովին աւելորդ դառնայ:

Ցիշենք մեր կշռի ապրանքով առևտուրի հետզհետէ սահմանափակւելու պատկերը լրացնելու համար, և տորոնի ու տրանզիտ շաքարի գործերը, որոնք արդէն պատմութեանն են պատկանում:

Կշռի ապրանքի վաճառականները ունին Եւրոպայում և մի գործ, որ մեր մէջ համարեա թէ մուտք չի գործել։ Այդ՝ աւանդառու յանձնակատարութիւնն է (комисіонерство съ выдачею аванса), որը մեծապէս դիւրացնում է առևտուրը մանաւանդ հեռաւոր քաղաքների հետ։ Դուք, օրինակ, ճանապարհ դնելով Մարսէլ 100 հակ բոժոժ՝ իսկոյն նրա արժողութեան $70 - 75\%$ փոխանակագիր էք քարշում այն աւանդառու-յանձնակատարի վերայ, որին ուղարկում էք ապրանքի բեռնագիրը և որի հետ արդէն նախապէս պայմանների մասին բանակցել էք։ Դուք շահւում էք նրանով, որ ձեր դրամի $70 - 75\%$ էլի ձեր ձեռքին է մնում և շարունակում էք նրանով ձեր առևտուրը։ իսկ աւանդառու-յանձնակատարը նրանով, որ նախ՝ իր դրամը ապահովագիրէ տեղաւորում է տարեկան $6 - 8\%$ և ապա, վաճառելով ձեր ապրանքը, վերցնում է 1 կամ 2% իբրև վարձատրութիւն իր աշխատանքի, նոյնքան ևս իբրև վարձ այն երաշխատրութեանը, որ նա անում է ձեր ապրանքի արժէքը անկորուստ ստանալուն և ձեզ հասցնելուն։

¹⁾ Ամերիկացիք ամեն տեղի բամբակը տեսակառելիս ոչ միայն բաժանում են նրան լաւի, միջակի և վատի, այլ դրանցից ամեն մէկն էլ բաժանում են տեսակների, օրինակ՝ լաւ միջակ, միջակ-միջակ, վատ-միջակ և ազն.

Այսպիսի մի տուն բաւական մեծ դրամագլխով 10 տարի առաջ բացւեց Մոսկվայում կլինտների համար շատ ձեռնուու պայմաններով ($75^0/0$ կանխավճար, $80^0/0$ տարեկան տոկոս, $1^0/0$ յանձնավարձք): Բայց թէ յանձնարարւող ապրանքների խարդախութիւնը և տէրերի ապօրինի պահանջները, օրինակ՝ որ 2-րդ տեսակը 1-ինի տեղ վաճառւի—աւելի ուղիղ ասած՝ յանձնւի—ինչպէս անում են շատերը, և թէ զանազան զեղծումներ ու անծշդութիւններ կլինտների կողմց—այնքան զգւեցրին այն տանը, որ նա, համոզւելով արևելցիների համար այդպիսի հաստատութեան վաղաժամ լինելուն մէջ՝ դադարեցրեց իր գործառնութիւնը:

Վաճառականութեան ընդհանուր տեսութիւնը աւարտելով՝ չենք կարող չարտայալու մեր անհամամիտ լինելը այն վաղուց ի վեր տարածւած կարծիքին՝ թէ հայերը, և մասնաւորապէս Անդրկովկասի հայերը, ընդունակ վաճառականներ են: Ինչումն է կայանում մեր ընդունակութիւնը: Քանի առևտրական տուն ունենք, որոնք հարիւր տարւայ գոյութիւն ունենար: Քանի առևտրական տուն ունենք, որոնք ներուպայի վաճառականական աշխարհում յայտնի լինեն: Գուցէ հին ժամանակներում այդպիսի անուն մենք իրաւամբ ունեցած ես լինենք, բայց մեր ներկան ապացուցանում է, որ այժմ մենք արժանի չենք այդ հռչակը վայելելու. մենք դեռ շատ բան ունենք ուսանելու. աւելի լաւ ասած՝ ամեն ինչ նորից պէտք է ուսանենք:

(Կը շարունակի)